Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Հավիտյան ընտանիք ու ընկերներ

Որտեղ էլ որ ապրեք, դուք ունեք ընկերներ, ովքեր ձգտում են այն մեծ երջանկությանը, որը դուք գտել եք, ապրելով Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով: Նրանք, գուցե, ի վիճակի չլինեն բառերով նկարագրել այդ երջանկությունը, բայց նրանք կարող են հասկանալ, երբ տեսնեն դա ձեր կյանքում: Նրանք կցանկանան իմանալ այդ երջանկության աղբյուրի մասին, հատկապես, երբ տեսնեն, որ ինչպես նրանք, դուք նույնպես հանդիպում եք փորձությունների:

Դուք զգացել եք երջանկություն, քանի որ պահել եք Աստծո պատվիրանները: Դա ավետարանով ապրելու խոստացված պտուղն է (տե՛ս Մոսիա 2.41): Դուք հավատարմորեն չեք հնազանդվում Տիրոջ պատվիրաններին, որպեսզի ուրիշ մարդիկ դա տեսնեն, այլ նրանք, ովքեր նկատում են ձեր երջանկությունը, Տիրոջ կողմից նախապատրաստվում են լսելու ավետարանի Վերականգնման լավ լուրը:

Ձեզ տրված օրհնությունները ձեզ համար ստեղծել են պարտականություններ և հիանալի հնարավորություններ: Որպես Հիսուս Քրիստոսի ուխտյալ հետևորդ՝ դուք պարտավորված եք ուրիշներին ավելի մեծ երջանկություն գտնելու հնարավորություն ընձեռել, հատկապես՝ ձեր ընկերներին և ձեր ընտանիքի անդամներին:

Տերը տեսել է ձեր հնարավորությունը և նկարագրել է ձեր պարտականությունը հետևյալ պատվիրանի միջոցով. «Եվ ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին» (ՎևՈւ 88.81):

Երբ դուք ընդունում եք և ապրում եք ըստ Հիսուս Քրիստոսի ավետարանի, ձեր սրտում տեղի ունեցող փոփոխության միջոցով Տերն այդ պատվիրանին հնազանդվելը հեշտացնում է: Որպես արդյունք, նրանց նկատմամբ ձեր սերն աճում է, ինչպես նաև աճում է ձեր ցանկությունը, որպեսզի նրանք ունենան նույն երջանկությունը, որը դուք ճաշակել եք:

Այդ փոփոխության օրինակներից մեկն է, թե ինչպես եք դուք արձագանքում Տիրոջ միսիոներական աշխատանքին օգնելու հնարավորությանը: Լիաժամկետ միսիոներները շուտով հասկանում են, որ հավատարիմ նորադարձներից ուղղորդում խնդրելիս կարող են ջերմ պատասխան ակնկալել: Նորադարձը ձգտում է, որ իր ընկերներն ու ընտանիքի անդամներն իրենց բաժինն ունենան այդ երջանկության մեջ:

Երբ ձեր ծխի միսիոներների ղեկավարը կամ միսիոներները հարցնում են ինչ-որ մեկի անունը, ում կարող են ուսուցանել, դա շատ ողջունելի է ձեզ համար: Նրանք գիտեն, որ ձեր ընկերները տեսել են

ձեր երջանկությունը և, հետևաբար, այդ ընկերները նախապատրաստվել են լսելու և ընտրելու ընդունել ավետարանը:

Դուք չպետք է վախենաք, որ կկորցնեք ընկերներ, միսիոներներին նրանց հետ հանդիպելու հրավիրելով: Ես ունեմ ընկերներ, ովքեր մերժել են միսիոներներին, բայց տարիներ շարունակ շնորհակալ են եղել ինձ, որ առաջարկել եմ նրանց այն, ինչը նրանք գիտեն, որ շատ թանկ է եղել ինձ համար: Դուք կարող եք հավերժական ընկերներ դառնալ ավետարանն առաջարկելով, որը, ինչպես նրանք տեսնում են, ձեզ երջանկություն է բերել: Երբեք բաց մի թողեք հնարավորությունը հրավիրել ընկերոջը և, հատկապես, ընտանիքի անդամին ընտրել հետևել երջանկության ծրագրին:

Չկա ավելի մեծ հնարավորություն այդ հրավերքի համար, քան Եկեղեցու տաճարներում: Այնտեղ Տերը մեր նախնիներին կարող է առաջարկել փրկության արարողությունները, ովքեր չեն կարողացել ընդունել դրանք կյանքի ընթացքում: Նրանք վերևից ձեզ են նայում սիրով և հույսով: Տերը խոստացել է, որ նրանք Իր արքայություն գալու հնարավորություն կունենան (տե՛ս ՎևՈւ 137.7–8), և Նա նրանց նկատմամբ սեր է սերմանել ձեր սրտում:

Ձեզանից շատերն են զգացել ուրախություն ուրիշներին տաճարային արարողություններ առաջարկելիս, հենց այնպես, ինչպես զգում եք, երբ մարդկանց անուններ եք տալիս միսիոներներին, որպեսզի հանդիպեն նրանց հետ: Դուք նույնիսկ ավելի մեծ ուրախություն եք զգացել, կատարելով տաճարային արարողություններ ձեր նախնիների համար: Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնություն է տրվել, որ մեր հավերժական երջանկությունը հնարավոր է միայն, եթե մենք տաճարային փոխարինող արարողությունների միջոցով առաջարկենք այդ օրհնության ճանապարհը մեր նախնիներին (տե՛ս ՎևՈւ 128.18):

Սուրբ Ծննդյան ժամանակահատվածը դարձնում է մեր սրտերը դեպի Փրկիչը և դեպի այն ուրախությունը, որ բերել է մեզ Նրա ավետարանը: Մենք լավագույն կերպով ցույց ենք տալիս Նրան մեր երախտագիտությունը, երբ առաջարկում ենք այդ երջանկությունն ուրիշներին: Երախտագիտությունը վերածվում է ուրախության, երբ մենք առաջարկում ենք անուններ միսիոներներին, և երբ մենք տաճար ենք տանում մեր նախնիների անունները: Մեր երախտագիտության այդ ապացույցը կարող է ստեղծել ընկերներ ու ընտանիքներ, որոնք կլինեն հավերժ:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Նախագահ Այրինգը բացատրում է, որ մենք կարող ենք Փրկչի նկատմամբ մեր երախտագիտությունը ցույց տալ՝ ավետարանով կիսվելով ուրիշների հետ: Նրանց հետ, ում ուսուցանում եք, դուք կարող եք քննարկել, թե ինչպես է ավետարանի պարգևն օրհնել իրենց կյանքերը: Կարող եք հրավիրել նրանց աղոթքով գտնել այն մարդկանց, ում հետ նրանք ցանկանում են կիսվել ավետարանի պարգևով և ինչպես կարող են դա անել:

ԵՐԵԽԱՆԵՐ

Կիսվեք ձեր վկայությամբ

Այս Սուրբ Ծնունդին դուք կարող եք կիսվել ավետարանի պարգևով՝ ձեր ընկերներից մեկին կամ հարևանին տալով Մորմոնի Գրքի մեկ օրինակ՝ որի ներսում գրված է ձեր վկայությունը: Այն պատրաստելիս հետևեք այս քայլերին.

1. Մի կտոր թղթի վրա չափեք 4½ x 6½ դյույմ ունեցող ուղղանկյուն (11½ x 16½ սմ) և թույլ տվեք, որ որևէ չափահաս օգնի ձեզ կտրել այն:
2. Էջի վերևի հատվածում ավելացրեք ձեր նկարը՝ գծագիր, կամ լուսանկար:
3. Ձեր նկարի տակ գրեք ձեր վկայությունը:
4. Թույլ տվեք, որ որևէ չափահաս օգնի ձեզ փակցնել թուղթը Մորմոնի Գրքի կազմի ներսի մասում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Կարո՞ղ եմ կիսվել Մորմոնի Գրքով:

Ջոշ Արնեթ

Ավագ դպրոցի առաջին տարվա ընթացքում իմ սեմինարիայի ուսուցիչն հրավիրեց իմ դասարանի անդամներին տալ Մորմոնի Գրքի օրինակներ ոչ անդամ ընկերներին: Չնայած որ ես աներևակայելիորեն ամաչկոտ էի, ես ընդունեցի հրավերը:

Երկու օր տևեց քաջություն հավաքելու համար, բայց, ի վերջո, ճաշի ժամանակ ես տվեցի գիրքը իմ ընկերուհի Բրիթնիին և բերեցի կարճ վկայություն: Բրիթնին շնորհակալություն հայտնեց գրքի համար:

Այդ ուսանողական տարվա վերջում Բրիթնին տեղափոխվեց, բայց մենք կապի մեջ էինք: Նա ինձ պատմեց իր նոր դպրոցի մասին, և որ նրա գրեթե բոլոր ընկերները Եկեղեցու անդամներ էին, բայց նա երբեք չէր խոսում ինձ հետ որևէ հոգևոր բանի մասին:

Նախքան իմ միսիա գնալը փոփոխություն տեղի ունեցավ: Ես հաղորդագրություն ստացա Բրիթնիից այն մասին, որ մեծ նորություն ունի ինձ համար. նա պատրաստվում էր մկրտվել և ուզում էր շնորհակալություն հայտնել ինձ իր ընկերը լինելու և լավ օրինակ ծառայելու համար:

Աստված ընտրեց մի ամաչկոտ 15-ամյա տղայի առանց միսիոներական փորձառության և առաջնորդեց նրան կիսվել ավետարանով մեկի հետ, ում Նա գիտեր, որ կընդունի այն: Ես գիտեմ, որ լսելով Սուրբ Հոգուն, մենք բոլորս կարող ենք գտնել մարդկանց մեր շրջապատում, ովքեր սպասում են վերականգնված ավետարանի մասին սովորելուն: Ես գիտեմ, որ եթե մենք օգնենք Տիրոջ մոտ բերել գեթ մեկ հոգի, «որքա՜ն մեծ կլինի [մեր] ուրախությունը նրա հետ [մեր] Հոր արքայությունում» (ՎևՈւ 18.15):

Հեղինակն ապրում է Վաշինգտոնում, ԱՄՆ:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/13: Թարգմանության հաստատումը. 6/13: *First Presidency Message, December 2013.* Armenian.-ի թարգմանությունը 10672 201

Հիսուս Քրիստոսի Աստվածային Առաքելությունը. Միածին Որդին

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և մտածեք, թե ինչով կիսվել: Ինչպե՞ս է Փրկչի կյանքի և առաքելության մասին հասկացողությունն ավելացնում ձեր հավատքը Նրա նկատմամբ և օրհնում նրանց, ում մասին դուք հոգ եք տանում այցելող ուսուցիչների միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք reliefsociety.lds.org:

Սա կազմում է Այցելող Ուսուցիչների Ուղերձների շարքի մասը, որը նկարագրում է Փրկչի առաքելության տեսանկյունները:

Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, կոչվում է Միածին Որդի, որովհետև Նա միակ անձնավորությունն է երկրի վրա, ով ծնվել է մահկանացու մորից և անմահ Հորից: Նա Աստծուց՝ Իր Հորից, ժառանգեց աստվածային զորություն: Իր մորից՝ Մարիամից, Նա ժառանգեց մահացություն և ենթարկվեց սովի, ծարավի, հոգնածության, ցավի և մահվան:[1]

Քանի որ Հիսուս Քրիստոսը Հոր Միածին Որդին է, Նա ի վիճակի էր վայր դնել Իր կյանքը և նորից այն վերցնել: Սուրբ գրությունները ուսուցանում են, որ «Քրիստոսի քավությամբ» մենք «ձեռք [ենք] բերում հարություն» (Հակոբ 4.11): Մենք նաև սովորում ենք, որ բոլորը «[կբարձրացվեն] [իրենց] անմահության մեջ՝ ի հավերժական կյանք», եթե մենք «[հավատանք]» (ՎԵՈՒ 29.43):

Երբ մենք ավելի լիարժեքորեն հասկանանք, թե ինչ է նշանակում Հիսուսի համար լինել Հոր Միածին Որդին, մեր հավատքն առ Քրիստոս կմեծանա: Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից ասել է. «Հավատքն առ Հիսուս Քրիստոս համոզմունքն և հավաստիացումն է (1) Աստծո Միածին Որդի լինելու Նրա կարգավիճակի, (2) Նրա անսահման Քավության, և (3) Նրա բառացի Հարության մասին»:[2] Ժամանակակից մարգարեները վկայել են. «[Հիսուս Քրիստոսը] եղել է . . . Միածին Որդին մարմնով, աշխարհի Քավիչը»:[3]

Սուրբ գրություններից

Հովհաննես 3.16; Վարդապետություն և Ուխտեր 20.21–24; Մովսես 5.6–9

Մեր պատմությունից

Նոր Կտակարանում մենք կարդում ենք կանանց մասին, ում անուններն ասվում են և չեն ասվում, ովքեր հավատք գործադրեցին առ Հիսուս Քրիստոս, սովորեցին և ապրեցին Նրա ուսմունքներով, և վկայեցին Նրա ծառայության, հրաշքների և վեհության մասին: Այս կանայք փրկության աշխատանքում դարձան օրինակելի հետևորդներ և կարևոր վկաներ:

Օրինակ, Մարթան ամուր վկայություն բերեց Փրկչի աստվածայնության մասին, երբ նա ասաց Նրան. «Ես հավատացել եմ, թէ դու ես Քրիստոսն՝ Աստուծոյ Որդին, որ պետք է աշխարհք գայիր» (Յովհաննէս 11.27):

Փրկչի աստվածայնության ամենավաղ վկաներից էին Նրա մայրը՝ Մարիամը, և իր զարմուհի Եղիսաբեթը: Երբ Գաբրիել հրեշտակն այցելեց Մարիամին, նա շուտով այցի գնաց Եղիսաբեթի մոտ: Երբ Եղիսաբեթը լսեց Մարիամի բարևը, նա «Սուրբ Հոգիով լցուեցաւ» (Ղուկասու 1.41) և բերեց վկայություն, որ Մարիամը դառնալու էր Աստծո Որդու մայր:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Ալմոսրանի սկզբունքները* (2009), 52–53:
2. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Զորացնել հավատք առ Հիսուս Քրիստոս», *Լիահոնա,* Սեպտ. 2012, 13:
3. «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը» *Լիահոնա,* Ապր. 2000, 2–3:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչու՞ է կարևոր ինձ համար հասկանալ Հիսուս Քրիստոսի դերը:

2. Ինչպե՞ս է մեր հավատքը մեծանում, երբ մենք պահում ենք պատվիրանները:

© 2013 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/13: Թարգմանության հաստատումը. 6/13: *Visiting Teaching Message, December 2013.* Armenian.-ի թարգմանությունը 10672 201